ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՓՈԽԵԼ ԿՅԱՆՔՍ

Հարցեր, որոնցով կուզեք դիմել Աստծուն
Մաս 5
Ծննդոց 32:22-32

Առաջին փուլ – Ճգնաժամ

«Եվ Հակոբը մնաց միայնակ: Եվ մի մարդ գոտեմարտում էր նրա հետ մինչև արևածագ: Երբ մարդը տեսավ, որ չկարողացավ հաղթել նրան, դիպավ նրա ազդրի ջղին, և Հակոբի ազդրի ջիղը թուլացավ նրա հետ գոտեմարտելու ժամանակ:» Համար 24-25

* Աստված օգտագործում է ճգնաժամը մեր ուշադրությունը գրավելու համար

Մենք երբեք չենք փոխվի, մինչև ցավը ավելի մեծ չլինի, քան թե փոփոխության նկատմամբ ունեցած մեր վախը

Երկրորդ փուլ – Նվիրում

«Նա ասաց. «Թո՛ւյլ տուր ինձ, որովհետև արշալույսը բացվեց»: Հակոբն ասաց. «Չեմ թողնի քեզ, մինչև որ ինձ չօրհնես»: Համար 26

* Աստված հաճախ սպասում է որ տեսնի թե մենք իսկապե՞ս հանձնվում ենք

Շատերը բաց են թողնում Աստծո լավագույն առիթը, որովհետև շատ շուտ են տեղի տալիս

«Բարիք գործելուց չձանձրանանք, որովհետև իր ժամանակին կհնձենք, եթե չթուլանանք:»
Գաղատացիս 6:9

Երրորդ փուլ – Խոստովանություն

«Եվ ասաց նրան. «Ի՞նչ է քո անունը»: Նա էլ պատասխանեց. «Հակոբ է:» Համար 27

* Հակոբ նշանակում է "Խաբող"

Դասը – Ես երբեք չեմ կարող փոխել իմ տկարությունները, մինչև չխոստովանեմ դրանք

Չորրորդ փուլ – Համագործակցություն

«Նա ասաց. «Քո անունն այլևս թող Հակոբ չասվի, այլ Իսրայել, որովհետև դու մարտնչեցիր Աստծու հետ ու մարդկանց հետ և հաղթեցիր»...և նա այնտեղ օրհնեց Հակոբին: Հակոբն այդ տեղը կոչեց Փանուել, որովհետև, ասաց նա, «Աստծուն տեսա դեմ առ դեմ...» Համար 28-30

(Համար 31) – Հակոբը կաղալով քայլեց մինչև իր կյանքի վերջը: Այդ շարունակաբար հիշեցնում էր երկու ճշմարտություններ

* Նա պետք է հենվեր Աստծո զորության վրա, ոչ թե իր

* Փախուստ տալը երբեք չի լուծում դժվարությունը

Դու չպետք է մնաս նույնը

«Հանե՛ք ձեր վրայից հին ընթացքն ունեցող մարդուն...և ձեր մտքով ու հոգով նորոգվե՛ք.» Եփեսացիս 4:22-23

«Հիսուս ասաց ,"Դուք պետք է վերստին ծնվեք":»
Հովհաննես 3:7